



ՀԱՅԱՍՏԱՆ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի¹ համատեղ ներկայացրած զեկույցը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին

Համընդհանուր պարբերական դիտարկման 21-րդ նիստ

Հունիս, 2014 թ.

Մաս I

¹ «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ, «Ագաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն, Գլոբալացման և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն, Արմավիրի զարգացման կենտրոն, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ, «Մեր իրավունքների սահմանները» ՀԿ, «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն, «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» ՀԿ, Գորիսի մամուլի ակումբ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան ՀԿ, Լրագրողների «Ասպարեզ» ակումբ, Գիտակների «Խորանկրդ» ինտելեկտուալ կենտրոն ՀԿ, «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ, «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան», «Մանդատ» տեղեկատվական ՀԿ-ի «Parliamentmonitoring.am» կայք, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան ՀԿ, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԿ, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ և «Մենք պլյուս» սոցիալական ՀԿ:

Սույն գեկույցը պատրաստվել է քաղաքացիական հասարակության կառույցների դաշինքի համատեղ ջանքերով, որոնք հարուստ փորձ ունեն Հայաստանում մարդու իրավունքների խախտումների մշտադիտարկման, փաստագրման և գեկուցման բնագավառում: Ձեկույցն անդրադառնում է հետևյալ ոլորտներին. արդարադատության իրականացում և իրավունքի գերակայություն, կյանքի իրավունք, խոշտանգումների չենթարկվելու իրավունք, ազատության իրավունք, հավաքների ազատություն, մտքի ազատություն, կարծիքի ազատություն, զանգվածային լրատվամիջոցների ազատություն, խտրականության արգելք և քվեարկելու իրավունք: Սույն գեկույցը պատրաստվել է բոլոր կազմակերպությունների հետ ընդգրկուն խորհրդակցությունների հիման վրա: Ձեկույցում օգտագործված են նրանց կողմից իրականացված մշտադիտարկման և իրավապաշտպան աշխատանքների միջոցով անմիջականորեն հավաքագրված տվյալները: Ձեկույցի նախապատրաստմանն օժանդակել և աշխատանքները համակարգել է **Բաց հասարակության հիմնադրամներ—Հայաստան** կազմակերպությունը:

Հարցերի դեպքում դիմել՝

Մարիա Աղաջանյան

Ծրագրերի ավագ համակարգող

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան

Էլ-փոստ՝ maria@osi.am

Կարինե Ղազարյան

Ծրագրերի համակարգող

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան

Էլ-փոստ՝ karine@osi.am

Բովանդակություն

Ներածություն.....2

Արդարադատության իրականացումը/հասանելիությունը և իրավունքի գերակայությունը4

Կյանքի իրավունք.....9

Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը..... 11

Ազատության իրավունքը..... 14

Հավաքների ազատությունը..... 16

Մտքի, խղճի և կրոնի ազատությունը..... 18

Կարծիքի և լրատվամիջոցների ազատության իրավունքը.....20

Խտրականության չենթարկվելու իրավունքը.....23

Ընտրությունները, ընտրելու իրավունքը.....26

Ներածություն

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի կողմից պատրաստված սույն տեղեկանքում ամփոփված են Հայաստանում մարդու իրավունքների վիճակի՝ նրանց գնահատման արդյունքները՝ համընդհանուր պարբերական դիտարկման (հետայսու՝ «ՀՊԴ») առաջին շրջափուլից հետո: Վերանայման նախորդ շրջափուլի ընթացքում հինգ տարի առաջ, Հայաստանը քաղաքական դաշտի և մարդու իրավունքների ոլորտի առումով հայտնվել էր ձգնաժամում, որի պատճառներն էին կեղծված ընտրությունները և հետընտրական մահաբեր բռնությունը: Այդ ժամանակից ի վեր հավուր պատշաճի չեն հետաքննվել ո՛չ ընտրակեղծիքները, ո՛չ խաղաղ ցույցը ցրելու ընթացքում 10 ցուցարարների մահվան հանգամանքները, ո՛չ հարյուրավոր ցուցարարների իրավունքների ոտնահարման դեպքերը: Ընդ որում, ազատագրվածներից շատերը բանտարկվել են քաղաքական պատճառներով:² Ավելին, քաղաքական կարծիքների համար դատապարտված անձինք ազատ են արձակվել միայն համաներմամբ, այլ ոչ՝ պատշաճ դատական գործընթացով:

Վերջին երեք տարիներին կար հույս, որ Եվրոպական միության հետ ասոցացման համաձայնագիր ստորագրելու ուղղությամբ հռչակված վեկտորը կապահովի կոռուպցիայի և օլիգարխական իշխանության դեմ պայքարի մեխանիզմներ, լծակներ և գործիքներ՝ ուժեղացնելով ժողովրդավարական կառավարումը և մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտները: Ասոցացման համաձայնագիրը նախաստորագրելու փոխարեն Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի հետ միասին Մաքսային միությանն անդամակցելու՝ նախագահ Սերժ Սարգսյանի որոշումը ոչ միայն դադարեցրեց ժողովրդավարական առաջխաղացումը, այլև ի ցույց դրեց Հայաստանի կառավարման համակարգի ավտոկրատ և ոչ հաշվետու բնույթը: Ավելին, հանրությունից բացարձակ օտարվածության մթնոլորտում նախաձեռնվեցին հեռուն գնացող տարաբնույթ տնտեսական և քաղաքական գործընթացներ՝ ընդհուպ այնպիսի խորը գործընթաց, ինչպիսին Սահմանադրության փոփոխություններն են:

Մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական և հայեցակարգային դաշտն անբավարար են, քանի որ քաղաքացիական հասարակությունը չունի քաղաքականության ձևավորման գործընթացի վրա ազդելու արդյունավետ մեխանիզմներ: Պետությունը չունի խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման համապարփակ ազգային ծրագիր կամ քաղաքականություն: Թեպետ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունն ուժի մեջ մտավ 2012 թվականին, իսկ դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատվեց 2014 թվականին, հասարակական կազմակերպությունների առաջարկությունները հիմնականում անուշադրության մատնվեցին:

² Վեհաժողովի 1609 (2008) և 1620 (2008) բանաձևերի կատարումը Հայաստանի կողմից: Աղբյուրը՝ <http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileID=12070&Language=EN>

2008 թվականի մարտի 11-ի իրադարձություններին առնչվող վերջին քաղաքական բանտարկյալը՝ Նիկոլ Փաշինյանը, ազատ արձակվեց 2011 թվականի մայիսի 27-ին:

Համընդհանուր պարբերական գնահատման՝ Հայաստանում իրականացված ուսումնասիրության առաջին շրջափուլի ավարտից վեց ամիս անց, քաղաքացիական հասարակության ճնշումների ներքո կառավարությունն ստեղծեց ՀՊԴ-ի կատարման աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը կլոր սեղանի մի քանի քննարկում կազմակերպեց՝ շահագրգիռ անձանց հետ քննարկելու դեռևս չկատարված առաջարկությունները և դրանց կատարման ընթացքը: Գործընթացը դժբախտաբար նմանակում էր, այլ ոչ առաջարկություններին հետամուտ լինելու իրական փորձ, քանզի գործընթացը չանդրադարձավ առավել հրատապ և կարևոր հիմնախնդիրներին: Անուշադրության մատնված հիմնախնդիրներից էին 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին հաջորդած՝ մահվան 10 դեպքերի անկախ և վստահելի հետաքննության ապահովումը, ոստիկանության կողմից անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի բողոքների հետաքննումը և բռնարարներին պատասխանատվության ենթարկելը, կամ «Կենցաղային բռնության մասին» առանձին օրենքի ընդունումը: Հավատացած ենք, որ կառավարությունը ՀՊԴ գործընթացը չի դիտարկել որպես համակարգային փոփոխությունների հնարավորություն, այլ դրան վերաբերվել է զուտ տեխնոկրատական, օրենք փոխելու տեսանկյունից: Հետևանքը եղել է այն, որ իրավունքների և ազատությունների բնագավառում չեն արձանագրվել իրական և գործնական փոփոխություններ:

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Թրանսփարենսի ինթերնեշնլ կազմակերպության «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր» ուսումնասիրության տվյալներով, հայաստանցիների 67%-ը համարում են, որ դատական իշխանությունը կոռումպացված է կամ ծայրահեղ կոռումպացված:³ Չնայած այս ոլորտում դոնորների կողմից ֆինանսավորվող բազմաթիվ բարեփոխումների, արդարադատության հասանելիության վիճակը մնում է խնդրահարույց: 2012-2016 թվականների դատաիրավական բարեփոխումների նոր ծրագրում չեն հիմնավորվում առաջնահերթ ոլորտների ընտրության պատճառները, չի գնահատվում նախկին ռազմավարությունների իրականացումը, և հիմնականում անուշադրության են մատնվում արդարադատության հասանելիության և իրավունքի գերակայության ապահովման հանձնառությունները: Քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման հրամայականն առկա է, հատկապես՝ 2008 թվականի նախագահական ընտրություններին հաջորդած բռնի իրադարձություններից հետո, որոնց առնչությամբ դեռևս չի իրականացվել վստահելի քննություն, որը վկայում է արդար դատաքննության ապահովման առումով արդարադատական համակարգի բացարձակ տապալման մասին: Չնայած որ Քրեական դատավարության օրենսգիրքը մշակվել և լայնորեն քննարկվել է շահագրգիռ անձանց հետ, այն դեռևս չի ընդունվել Ազգային ժողովում և դեռևս պարունակում է խնդրահարույց դրույթներ: Առանձնակի մտահոգության տեղիք են տալիս հետևյալ խնդիրները. ցուցմունքի դատական դեպոնացումը, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց կալանավորման կամ խափանման այլընտրանքային միջոցների ընտրության կարգը և այն դրույթները, որոնց համաձայն մասնավոր անձը կարող է վճռաբեկ դատարան դիմել միայն արտոնագրված փաստաբանի օգնությամբ:

Անկախ դատական իշխանության կայացումը

Դատական անկախության բացակայության մասին են վկայում հսկողական տարբեր գործելաոճերը և օրենսդրական սողանցքները: Նախագահը դատավորների նշանակման գործընթացի, կարգապահական վարույթների և դատավորի լիազորությունների դադարեցման վրա ազդելու հայեցողական լիազորություններ ունի, որոնց կապակցությամբ սակավաթիվ են զսպանակները և հակակշիռները: Թեպետ արդարադատության խորհուրդն է առաջարկում դատավորի թեկնածուների ցուցակը, այն օժտված է միայն խորհրդատվական, բայց ոչ փաստացի որոշումներ կայացնելու իրավասություններով: Նախագահն իրավասու է նշանակման⁴ և առաջխաղացման⁵

³ Թրանսփարենսի ինթերնեշնլ, «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013», աղբյուրը՝ <http://www.transparency.org/gcb2013/country/?country=armenia>

⁴ Դատական օրենսգրքի 117-րդ հոդվածը:

համար ցուցակից ընտրել «իրեն ընդունելի թեկնածուներին»: Նախագահի կողմից չընտրվող թեկնածուները որակագրկվում են և ստիպված են լինում գործընթացը սկսել գրոյից:⁶

Ղատական անկախության բացակայության մասին է վկայում նաև դատավորների՝ իրենց դատարանի այլ դատավորների կամ վճռաբեկ դատարանի դատավորների հետ խորհրդակցելու՝ ձևավորված պրակտիկայի գոյությունը:⁷ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ արդարադատության հասանելիության մասին արտահերթ զեկույցում⁸ հաստատվել է վերոհիշյալ պրակտիկայի առկայությունը, և ներկայացվել են առաջին ատյանի, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի կաշառքների գումարային սանդղակները:

Օրենքի նյութական և դատավարական նորմերի խախտումների համար կարգապահական տույժեր կիրառելու առկա իրավական հիմքերը և պրակտիկան կաշկանդող ազդեցություն է թողնում դատավորների վրա և չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Ղատավորի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումները, ներառյալ՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումները,⁹ որևէ տեսակի բողոքարկման ենթակա չեն՝ ո՛չ վարչական, ո՛չ դատական կարգով: Այս պրակտիկան դատավորներին զրկում է բողոքարկման հնարավորությունից, որը լրջորեն վտանգում է դատավորների իշխանության գործադիր ճյուղից անկախությունը:

Առաջարկություններ

- Ղատական օրենսգրքից հանել դատավորների ցուցակը հաստատելու՝ Նախագահի հայեցողական լիազորությունը. արդարադատության խորհրդի կողմից առաջարկվող ցանկը պետք է համարել վերջնական, և Նախագահի ստորագրությունը պետք է պարզապես արարողակարգային գործողություն լինի:

⁵ Ղատական օրենսգրքի 137(9) և 138(8) հոդվածները:
⁶ 123 (10) հոդվածը:
⁷ Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն, Հայաստանի դատական բարեփոխումների համաթիվը, IV հատոր, 2012 թ. դեկտեմբեր:
⁸ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցն արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ: Աղբյուրը <http://ombuds.am/library/library/page/101/type/3>
⁹ Ղատական օրենսգրքի 157 (1) հոդվածի համաձայն, դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում Արդարադատության խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.
1) Նախագազուշացում. դատավորին տրվող պաշտոնական նախատինք է, որը կիրառվում է Արդարադատության խորհրդի կողմից նվազ ծանրության ճանաչված կարգապահական խախտման համար, եթե դատավորը չունի տույժ:
2) նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով.
3) խիստ նկատողություն, որը զուգորդվում է՝ դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով.
4) դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը: Սա ենթակա է կիրառման այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի համար:

- Ղատական ակտերի կայացման գործընթացում ապահովել ներքին անկախությունը՝ բացառելով վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանների վրա գործադրվող ճնշումը:
- Փոփոխություններ կատարել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերում՝ սահմանելով հստակ և ճշգրիտ չափորոշիչներ, միջազգային ճանաչված չափանիշներին և լավագույն գործելակերպին համահունչ, ներառյալ՝ բողոքարկման ընթացակարգը:
- Վերացնել քրեական վարույթի ընթացքում ամբաստանյալի խոստովանական ցուցմունքի դեպոնացումը:
- Ապահովել վճռաբեկ դատարանի արդյունավետ հասանելիությունը, որպեսզի քրեական կամ վարչական գործերի մասնավոր մասնակիցներն առանց արտոնագրված փաստաբանի կարողանան վճռաբեկ բողոքներ ներկայացնել վճռաբեկ դատարան:

Ղատարանների անկախությունը և «զենքերի հավասարությունը» դատավարությունում

Ղատարանները կանոնավոր կերպով խախտում են «զենքերի հավասարության» սկզբունքն այն գործերով, որոնցով մասնակիցներից մեկը պետական մարմին է: Չնայած ՀՊԴ-ի հիման վրա այս խնդիրը լուծելու առումով կառավարության ստանձնած հանձնառությանը¹⁰, պահպանվում է դատախազական ուժեղ դիրքի և ներազդեցության ավանդույթը, որի հետևանքով անհարկի միջամտություն է տեղի ունենում արդարադատության իրականացմանը: Ղատախազական ազդեցությունը դրսևորվում է քրեական արդարադատության սուբյեկտիվ իրականացման տեսքով. մասնավորապես, 2012 թվականին կայացված դատավճիռների ընդհանուր թվի ընդամենը 2%-ն են հանգեցրել ամբաստանյալի ամբողջական կամ մասնակի արդարացմանը: Այս ազդեցության առկայությունն ապացուցվում է այն փաստով, որ 2013 թվականին դատախազության կողմից ներկայացվել են կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 3,172 միջնորդություն, որոնցից 3,011-ը (94.9%) բավարարվել են, մինչդեռ գրավը որպես կալանքի այլընտրանք դատախազի կողմից միջնորդվել է 576 դեպքերում, սակայն այդ միջնորդություններից բավարարվել է ընդամենը 129-ը (22.4%):¹¹

¹⁰ Տե՛ս ՀՊԴ-ի աշխատանքային խմբի 2010 թվականի հուլիսի 6-ի զեկույցը, 94.16 և 94.17 պարբերություններ:

Աղբյուրը՝ <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/149/42/PDF/G1014942.pdf?OpenElement>

¹¹ Այս համատեքստում, քրեական գործերի շրջանակում դատախազական մարմինների ազդեցությունը դատարանների վրա ապացուցվում է այն փաստով, որ 2013 թվականին ներկայացվել են կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 3,172 միջնորդություն, որոնցից 3,011-ը (94.9%) բավարարվել են, մինչդեռ գրավը որպես կալանքի այլընտրանք միջնորդվել է 576 դեպքերում, սակայն այդ միջնորդություններից բավարարվել է ընդամենը 129-ը (22.4%): Մանրամասների համար տե՛ս Հայաստանի Հանրապետության դատարանների 2012-2013 թթ. գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծությունը: Աղբյուրը՝ http://www.court.am/files/news/2864_am.pdf

Առաջարկություն

- Վերացնել շահերի բախումը՝ ներդնելով դատական իշխանության և դատախազության միջև հնարավոր բախումների հանգուցալուծման ընթացակարգ:

2008 թվականի մարտի 1-ի սպանությունների արդյունավետ քննությունը

Արդյունավետ և ամբողջական քննության չի ենթարկվել ոստիկանության կողմից ուժի անհամաչափ կիրառությունը,¹² որի պատճառով 2008 թվականի մարտի 1-ին սպանվեց առնվազն 10 և մարմնական վնասվածք ստացավ ավելի քան 130 անձ:¹³ Հիմնախնդիրն առաջ քաշվեց համընդհանուր պարբերական գնահատման առաջին շրջափուլի ընթացքում, և Հայաստանի կառավարությունն ընդունեց համապատասխան առաջարկությունները:¹⁴ Այնուհանդերձ, քննության բացակայության պայմաններում մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների և մահվան 10 դեպքերի համար պատասխանատուները չեն հայտնաբերվել և պատժվել, և համարժեք փոխհատուցում չի տրամադրվել մահացածների հարազատներին:

Առաջարկություն

- Իրականացնել 2008 թվականի մարտի 1-ի սպանությունների լիարժեք, մանրակրկիտ և արդյունավետ քննություն, պատժել մեղավորներին և տրամադրել համարժեք փոխհատուցում:

Արդարադատության հասանելիությունը խոցելի խմբերի համար/ անվճար իրավաբանական օգնությունը

Անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է Փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի (<ՊՂ) միջոցով: Միևնույն ժամանակ, 2012 թվականին փոփոխություններ կատարվեցին «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որով զգալիորեն ընդլայնվեց Հայաստանում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը (ներկայումս այդ իրավունքը վերապահված է անձանց 12 խմբերի): Սահմանափակ մրցակցության և աշ-

¹² Amnesty International Report 2011: The State of the World's Human Rights:

Աղբյուրը՝ http://files.amnesty.org/air11/air_2011_full_en.pdf

¹³ 2011 թվականի հունվարի 18-ից 21-ը Հայաստան կատարած այցից հետո Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար թոմաս Համարբերգի գեկույցը:

Աղբյուրը՝ <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1784273>

¹⁴ Տե՛ս ՀՊՂ-ի աշխատանքային խմբի 2010 թվականի հուլիսի 6-ի գեկույցը, 93.27 պարբերություն:

Աղբյուրը՝ <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/149/42/PDF/G1014942.pdf?OpenElement>

Տե՛ս նաև Հայաստանի կողմից ՀՊՂ-ի առաջարկությունների կատարման վերաբերյալ Միջնաժամկետ գնահատման գեկույցը, Ժնև, 25-ը մարտի, 2013 թ., էջ 101:

Աղբյուրը՝ <http://www.upr-info.org/followup/assessments/session21/armenia/MIA-Armenia.pdf>

խատանքային մեծ ծանրաբեռնվածության պայմաններում իրատեսորեն հնարավոր չէ ապահովել որակյալ իրավաբանական օգնությունը:¹⁵

Արդարադատության հասանելիությունը հատկապես խնդրահարույց է թմրադեղեր օգտագործողների, հոգեցոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց և ԼԳԲՏԻ անձանց համար, որի մասին է վկայում երեք մարզերում և մայրաքաղաքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրականացրած մշտադիտարկումը:¹⁶ Վերոհիշյալ անձանց համար ընդհանուր առմամբ հասանելի չեն փաստաբանները, և նրանց համար տեղում նշանակվում են հանրային պաշտպաններ, հաճախ՝ վերջին պահին, որը կասկածի տակ է դնում պաշտպանության որակը: Նշված խմբերն իրենց իրավունքների պաշտպանության առումով դժվարությունների են հանդիպում նաև դատական նիստերի ընթացքում, քանի որ դատավորները հաշվի չեն առնում նման գործերի առանձնահատկությունները և նրբությունները:

Առաջարկություններ

- Փոփոխություններ կատարել անվճար իրավաբանական օգնության մասին օրենսդրության մեջ՝ ավելացնելով անվճար իրավաբանական օգնության տրամադրման մասնագիտական կարողությունները և անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը:
- Դատավորների կրթության և մասնագիտական վերապատրաստման դասընթացներում ապահովել խոցելի խմբերի իրավունքներին նվիրված հատուկ թեմաների ներառումը:

¹⁵ Տե՛ս Հանրային պաշտպանների և հանրային պաշտպանի գրասենյակի կարիքների հետազոտությունը, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 2013 թ.: Աղբյուրը՝ http://www.prwb.am/sites/default/files/Hanrayin_pashtpanneri_ev_hanrayin_pashtpani_grasenyaki_karigneri.pdf

Տե՛ս նաև Պաշտպանության իրավունքի իրացման որակն ու արդյունավետությունը հանրային պաշտպանության համատեքստում, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 2013 թ.:

Աղբյուրը՝ http://www.prwb.am/sites/default/files/Պաշտպանության_իրավունքի_իրացման_որակն_ու_արդյունավետությունը_հանրային_պաշտպանության_համատեքստում.pdf

¹⁶ Թմրամիջոցներ գործածող անձանց արդար դատաքննության իրավունքի պաշտպանվածության վիճակը (Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում իրականացված քրեական գործերի ուսումնասիրության հիման վրա): Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2013 թ.: Աղբյուրը՝ http://hcav.am/wp-content/uploads/2013/07/tmramijoc_book-5.pdf

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Կյանքի իրավունքը երաշխավորող օրենսդրությունը համահունչ է միջազգային չափանիշներին, սակայն կատարումը խնդրահարույց է: Հիմնական խնդիրը պետության պատասխանատվության ներքո գտնվող անձանց մահվան համար պետության պատասխանատվությունն ամրագրող կարգավորումների, քաղաքականության կամ մեխանիզմի բացակայությունն է:

Փակ և կիսափակ հաստատությունները

Համապարփակ, անկախ և արդյունավետ հետաքննություն չի իրականացվում այն դեպքում, երբ անձը մահանում է քրեակատարողական հիմնարկներում, հոգեկարգաբանական բժշկական հաստատություններում կամ զինված ուժերում: Մահվան այդ դեպքերի քննություն հաճախ չի հարուցվում, իսկ հարուցված դեպքերը՝ կարճվում են հանցակազմի բացակայության պատճառով: 2011-2013 թթ. ժամանակահատվածի մահվան վիճակագրական տվյալները հետևյալն են. մահվան 78 դեպք քրեակատարողական հիմնարկներում՝ պայմանավորված հիվանդություններով և ինքնասպանությամբ, մահվան 141 դեպք նյարդաբանական-հոգեբուժական հաստատություններում՝ պայմանավորված սոմատիկ հիվանդություններով, մահվան 120 դեպք զինված ուժերում՝ ինքնասպանությունների բարձր ցուցանիշով կամ պայմանավորված առողջական խնդիրներով:¹⁷ Փակ կամ կիսափակ հաստատություններում մահվան դեպքերի՝ դատախազության կողմից իրականացվող քննությունը լիարժեք և արդյունավետ չէ: Առողջական ստուգումներով սկզբնական շրջանում զորակոչիկները պիտանի են ճանաչվում զինվորական ծառայության համար, սակայն մի քանի ամիս անց նրանք մահանում են բանակում, հիմնականում սրտանոթային հիվանդությունների կամ պատշաճ բուժօգնություն չստանալու պատճառով: Չկան տեղեկություններ այն մասին, թե արդյոք բանակում մահվան հանգեցրած առողջական խնդիրները գոյություն ունեցել են նախքան զորակոչի ենթարկվելը, թե ձեռք են բերվել ծառայության ընթացքում:¹⁸

¹⁷ Պաշտոնական տվյալների համաձայն, պատճառները հետևյալն են. հրադադարի խախտումներ (28 դեպք), կանոնադրության խախտումներ (10 դեպք), անվտանգության կանոնների խախտումներ (8 դեպք), դժբախտ պատահարներ (28 դեպք), առողջական խնդիրներ (12 դեպք), դիտավորյալ սպանություն (3 դեպք), ինքնասպանություն (29 դեպք), ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք (1 դեպք), իսկ մահվան մեկ դեպքի պատճառը հանրությանն անհայտ է մնացել:

Աղբյուրը <http://hcav.am/publications/մարդու-իրավունքների-վիճակը-հի-զինված/>, <http://hcav.am/publications/տեղեկանք-2013-թ-զինված-ուժերում-մահացու/>
¹⁸ Տե՛ս «Կյանքի իրավունքի ապահովումը Հայաստանի Հանրապետությունում մահապատժի վերացումից հետո» զեկույցը, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2012 թ.: Աղբյուրը http://hcav.am/wp-content/uploads/2012/09/kyanqi_iravunq_i_A5.pdf

Առաջարկություններ

- Իրականացնել կյանքի իրավունքի յուրաքանչյուր խախտման արդյունավետ քննություն և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:
- Նոր մշակված քրեական դատավարության օրենսգրքում և նոր մշակվող քրեական օրենսգրքում ներառել օրենսդրական նորմեր, որոնցով կամրագրվի պետության պատասխանատվությունը պետության պատասխանատվության ներքո գտնվող անձանց մահվան համար:

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Խոշտանգումների հիմնախնդիրն ընգծվել է ՀՊԴ-ի նախորդ շրջափուլում՝ որպես հրատապ խնդիր, որին անհրաժեշտ է անդրադարձնալ տարբեր տեսանկյուններից, մասնավորապես՝ խոշտանգման սահմանման անհամատեղելիությունը միջազգային չափանիշներին, մեղավորներին արդարադատության առջև կանգնեցնելը և խոշտանգումների միջոցով ստացված ապացույցների օգտագործումը դատարանում: Իրականում իրավիճակի բարելավում տեղի չի ունեցել ո՛չ օրենսդրության և ո՛չ պրակտիկայի մակարդակով: Թեպետ մշակվում է նոր քրեական օրենսգիրք, որը պետք է որ անդրադարձնա խոշտանգման սահմանման խնդրին, գործընթացը մեծ մասամբ իրականացվում է փակ դռների ետևում:

Խոշտանգման՝ քրեական օրենսգրքով նախատեսված սահմանումը (հոդվածներ 119 և 341) չի համապատասխանում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 1-ին հոդվածի սահմանմանը: Մասնավորապես, սահմանումը թույլ չի տալիս պետական պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի գործողություններին ուղղակի մասնակցության համար: Ավելին, քրեական օրենսգրքով նախատեսված սահմանումը չի նախատեսում ՄԱԿ-ի կոնվենցիայով պահանջվող՝ պետական պաշտոնյայի պատասխանատվությունն այն դեպքում, երբ խոշտանգումը տեղի է ունեցել «պետական պաշտոնյայի կամ պաշտոնական լիազորություններ իրականացնող այլ անձի դրդմամբ կամ համաձայնությամբ կամ լուռ համաձայնությամբ»: Այս սողանցքի հետևանքով ստացվում է այնպես, որ խոշտանգման մեղավորները քրեական հետապնդման են ենթարկվում այլ հոդվածներով և ստանում ավելի մեղմ պատիժներ, որի հետևանքով ամրապնդվում է անպատժելիության մթնոլորտը:

Ոստիկանության ձեռքակալված անձանց պահման վայրերը և քրեակատարողական հիմնարկները

Հայաստանի օրենսդրությամբ ներկայումս նախատեսված խոշտանգման սահմանումը թույլ չի տալիս քրեական հետապնդման ենթարկել պետական պաշտոնյաներին: Պաշտոնական տվյալներով, Հատուկ քննչական ծառայությունը 2013 թվականին 114 գործ է քննել պաշտոնական լիազորություններն անցնելու հատկանիշներով, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով:¹⁹ Այդ դեպքերից ընդամենը 19-ով է քրեական գործ հարուցվել, ընդ որում 19-ից 10-ը հետազայում կարձվել է:

¹⁹ ՀՀ քրեական օրենսգրքի 309(2) հոդվածը:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը հաղորդել է, որ խոշտանգումն օգտագործվում է քննիչների աշխատասենյակներում ինքնախոստովանական ցուցմունք կորզելու նպատակով, իսկ քննիչների աշխատասենյակները անհասանելի են քաղաքացիական հասարակության որևէ դիտորդների: Նրանք այս տվյալները ստանում են ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր կատարվող հերթական և արտահերթ այցելությունների հիման վրա: Հայաստանի հելսինկյան կոմիտեի տվյալներով,²⁰ դաժան վերաբերմունքի և խոշտանգման գոհերը հակված չեն բողոք ներկայացնել, քանի որ վախենում են ճնշումներից կամ բավարար վստահություն չեն տածում քննությունների նկատմամբ: Այն դեպքերում, երբ ներկայացվում է բողոք, գործը կա՛ն չի հարուցվում, կա՛ն կարճվում է ապացույցների անբավարարության հիմքով: Բացի դրանից, չի իրականացվում խոշտանգման մասին դատական նիստերի դահլիճում արված հայտարարությունների արդյունավետ քննություն, և դատական քննության ընթացքում շարունակում են օգտագործել ինքնախոստովանական ցուցմունքի տեսքով ստացված ապացույցները: Մինչդեռ, ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը տրամադրել է տվյալներ, որոնք վկայում են 2013 թվականի ընթացքում ձերբակալվածների մարմնական վնասվածքների թվաքանակի աճի մտահոգիչ միտումների մասին: Երևանում ձերբակալված 719 անձանցից 236-ը (32.8%) ընդունվել է մարմնական վնասվածքներով: Նմանապես, մարզերում ձերբակալված 712 անձանցից 88-ը (12.36%) նույնպես ընդունվել է մարմնական վնասվածքներով:

Նախկինի պես լուրջ խնդիր է քրեակատարողական հիմնարկների գերբնակեցումը: Որոշ քրեակատարողական հիմնարկներում իրավիճակը խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական հանձնաժողովի («CPT») կողմից ճանաչվել է խոշտանգմանը հավասարազոր:²¹ Հայաստանի կառավարությունը ծրագրում է լուծել այս խնդիրը՝ 10 տարիների ընթացքում կառուցելով չորս նոր հիմնարկներ, մասամբ՝ գործող հիմնարկների «բեռը» թեթևացնելու նպատակով:²² Ավելին, ներկայումս քննարկվում է պորբացիայի՝ որպես ազատագրկման այլընտրանքի ներդրման հնարավորությունը: Սի կողմից, կառավարությունը զարգացնում է ազատագրկման այլընտրանքները, սա-

²⁰ Ազատագրկվածների նկատմամբ վերաբերմունքը ոստիկանության բաժիններում, Հայաստանի հելսինկյան կոմիտեի, 2013 թ.:

Աղբյուրը՝ <http://armhels.com/wp-content/uploads/2013/04/zekuyc-2013Engl.pdf>

²¹ Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական հանձնաժողովի («CPT») կողմից 2010 թվականի մայիսի 10-ից 21-ը Հայաստան կատարած այցի զեկույցը Հայաստանի կառավարությանը:

Աղբյուրը՝ <http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf>

²² «Հայաստանի կառավարության պատասխանը Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական հանձնաժողովի («CPT») կողմից 2011 թվականի դեկտեմբերի 5-ից 7-ը Հայաստան կատարած այցի զեկույցին»: Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական հանձնաժողովի, 3-ը հոկտեմբերի, 2012 թ.:

Աղբյուրը՝ <http://www.cpt.coe.int/documents/arm/2012-24-inf-eng.htm>

կայն մյուս կողմից՝ ավելացնում և մեծացնում է քրեակատարողական հիմնարկները, ինչը վկայում է այն մասին, որ խափանման հիմնական միջոցն ապագայում նախկինի պես լինելու է ազատազրկումը:

Հայաստանի հելսինկյան կոմիտեի իրականացրած ուսումնասիրության²³ տվյալներով, բանտարկյալներին պատժելու առավել տարածված ձևերն են խցում մեկուսացնելը և մահակներով ծեծելը: Նույն ուսումնասիրությամբ պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկներում առկա է համակարգային կոռուպցիա, և լայն տարածում ունեն հիերարխիկ հարաբերությունները:

Առաջարկություններ

- Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածին համահունչ՝ նախատեսել քրեական պատասխանատվություն խոշտանգումների համար:
- Քաղաքացիական վերահսկողության համար հասանելի դարձնել ոստիկանության քննիչների աշխատասենյակները:
- Իրականացնել խոշտանգումների մասին բոլոր հայտարարությունների լիարժեք և անկողմնակալ քննություն և պատժել մեղավորներին:
- Երաշխավորել պրոբացիայի ծառայության ղեկավարի նշանակման գործընթացի, ինչպես նաև պրոբացիայի ծառայության գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:
- Բարելավել պայմաններն ազատազրկման վայրերում՝ Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական հանձնաժողովի («CPT») չափանիշներին համահունչ, և ապահովել ազատազրկման այլընտրանքների արդյունավետ օգտագործումը:

²³ «Ազատազրկում, թե՞ տառապանք. կյանքը քրեակատարողական հիմնարկներում». գեկույց: Հայաստանի հելսինկյան կոմիտե, 2013 թ.:
Աղբյուրը՝ <http://armhelsinki.com/wp-content/uploads/2013/12/zekuyc-2014Eng-2.pdf>

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածով հստակորեն ամրագրվում են անձի ազատությունը և անձեռնմխելիությունը սահմանափակելու իրավական հիմքերը: Այնուհանդերձ, այդ դրույթների կատարումը խնդրահարույց է և հանգեցնում է իրավունքների խախտումների:

Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէ վարչական ընթացակարգով ազատագրված անձանց պաշտպանության որևէ երաշխիք: Թեպետ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը պարունակում է դրույթներ վարչական կարգով բերման ենթարկելու մասին, գործնականում այն հաճախ է չարաշահվում ազատության կամայական սահմանափակման միջոցով:²⁴

Կամայական ձեռքակալությունը և կալանավորումը

Քաղաքացիական հասարակության տվյալները վկայում են այն մասին, որ ակտիվիստները հաճախ հրավիրվում են ոստիկանության բաժիններ՝ առանց պատշաճ ծանուցման, որից հետո նրանց նկատմամբ կիրառվում են վարչական տույժեր: Հատկապես խնդրահարույց է բանակում հանցագործությունների քննության ընթացքում ազատագրվման կիրառությունը: Պաշտպանության նախարարության ենթակայությամբ գործող քննչական ծառայությունը սերտորեն համագործակցում է ռազմական հրամանատարների հետ, և զինծառայողների ազատագրվումը և մեկուսացումը կիրառում զինծառայողներից ինքնախոստովանական ցուցմունք կորզելու նպատակով: Բանակում կյանքի իրավունքի սահմանափակումների հետ առնչվող երեք դեպքերում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը բացահայտել է, որ քննության ընթացքում 7 վկա ապօրինաբար զրկվել է ազատությունից 1-3 ամիս ժամկետով:

Իշխանություններն ազատագրվումը կիրառում են նաև իրենց քաղաքական հակառակորդներին կամ կառավարությանը քննադատող անձանց չեզոքացնելու նպատակով: Սկսած 2013 թվականի հոկտեմբերի 31-ից «Ցեղակրոն» կուսակցության ղեկավար Շանթ Հարությունյանը նստացույց էր հայտարարել Երևան քաղաքի Ազատության հրապարակում: Երբ նա և նրա դաշնակիցները կազմակերպել էին երթ դեպի նախագահական նստավայր, սադրիչները բախումներ էին հրահրել, և երթի մասնակիցներից 20-ը ձերբակալվել էր:²⁵ Նրանցից 14-ը ներկայումս կալանքի տակ է, և միանշանակ է, որ նրանց նկատմամբ իրականացվում է քաղաքական հետապնդում, քանի որ նրանց

²⁴ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդվածներ 182, 185 և 267:
²⁵ «Բախում Երևանի կենտրոնում. բազմաթիվ քաղաքացիներ բերման են ենթարկվել»: Աղբյուրը՝ <http://www.azatutyun.am/content/article/25159068.html>

նախնական կալանքը շարունակաբար երկարաձգվում է՝ առանց բավարար հիմքերի: Նրանց նկատմամբ ևս առաջադրվել են շինծու մեղադրանքներ «իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու» հատկանիշներով, չնայած մինչ այժմ որևէ ապացույց նման գործողության վերաբերյալ չի ներկայացվել:

Առաջարկություններ

- Օրենսդրությամբ և պրակտիկայում սահմանել ազատության իրավունքի յուրաքանչյուր խախտման դեպքում դատարանում և պետական այլ մարմիններում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունքը:
- Բացառել վարչական կարգով բերման ենթարկելու և կալանքի՝ որպես խափանման միջոցի չարաշահումը, հատկապես քաղաքականապես զգայուն գործերով:
- Դադարեցնել ապացույցներ կորզելու նպատակով նախաքննության ընթացքում զինծառայողների կամայական մեկուսացումը:

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

«Հավաքների ազատության մասին» օրենքը համահունչ է միջազգային չափանիշներին, սակայն դրա կիրառության ընթացքում տեղի են ունենում բազմաթիվ սահմանափակումներ: Խաղաղ հավաքների ընթացքում հաճախ բռնություն է գործադրվում ցուցարարների և լրագրողների նկատմամբ, ովքեր ապօրինաբար բերման են ենթարկվում ոստիկանություն, որտեղ ցուցարարներին ներկայացվում է վարչական մեղադրանք, և նրանց նկատմամբ հարուցվում են վարույթներ:

Խաղաղ հավաքների ազատությունը

2011 թվականին նոր օրենքի ընդունման արդյունքում արձանագրվել են դրական զարգացումներ. նվազել է հավաքների ծանուցումների մերժումների թիվը: 2012 թվականին հավաքների մասին ծանուցումների 10%-ը վերադարձվել է՝ տեխնիկական պահանջներին չհամապատասխանելու պատճառով (հիմնականում՝ 7-օրյա ծանուցումը ներկայացնելու պահանջի առումով): 2013 թվականին հավաքների մասին ծանուցումների թիվը, ինչպես նաև փաստացի հավաքների թիվը կտրականապես աճել է: Թեպետ հավաքների և ցույցերի սահմանափակման մասին կայացված պաշտոնական որոշումները սակավաթիվ են, ոստիկանությունը պարբերաբար ուժ է գործադրում կիրառելով կամայական սահմանափակումներ և նշելով, որ հավաքը «թույլատրված չէ»:²⁶ Նույն համատեքստում ոստիկանությունն անձանց գրկում է հավաքներ անցկացնելու տարրական պայմաններից, օրինակ՝ բողոքի երկարաժամկետ ակցիաների համար անհրաժեշտ վրանների տեղադրման հնարավորությունից:

2013 թվականի ընթացքում հավաքների ազատության իրավունքի սահմանափակման, խաղաղ ցուցարարների նկատմամբ ոստիկանության ապօրինությունների զագաթնակետը հանդիսացավ 2013 թվականի դեկտեմբերի 2-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի այցելության օրը: Երևան քաղաքում անցկացված բողոքի ակցիայի 110 մասնակից, այդ թվում՝ լրագրողներ, ապօրինի հիմքերով և բռնությունների կիրառմամբ բերման ենթարկվեց Երևանի ոստիկանության 8 բաժանմունք:

²⁶ 100-ից ավելի մասնակիցներ ունեցող միջոցառման դեպքում օրենքով պահանջվում է ոչ թե թույլտվություն ստանալ, այլ՝ ծանուցել:

| Հավաքների մասին ծանուցումները Երևանում | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|--|-----------|-----------|------------|------------|
| Ի գիտություն ընդունված ծանուցումները | 38 | 19 | 77 | 241 |
| Անցկացման վայրի կամ երթուղու փոփոխությունները / սահմանափակումները | 46 | 55 | 3 | 20 |
| Արգելքները | 3 | 0 | 0 | 0 |
| Ծանուցումը վերադարձվել է օրենքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով | | 0 | 12 | 3 |
| Հավաքը չեղյալ է հայտարարվել կազմակերպչի կողմից | 1 | 2 | 9 | 0 |
| Ընդամենը | 88 | 76 | 101 | 264 |

2010–2014թթ. ժամանակահատվածում մի շարք ֆիլմերի դիտումներ արգելվել են կամ զրկվել ցուցադրման համար անհրաժեշտ տարածքից: Սասնավորապես, 2008 թվականի ընտրությունների մասին «Ընտրություն» և «Հայաստանի կորսված գարունը» ֆիլմերը, ԼԳԲՏ խնդիրներին վերաբերող «Պարադա» ֆիլմը և Լարս Ֆոն Տրիերի «Նիմֆոմանուիին» ֆիլմը: Ավելին, լրագրողների «Ասպարեզ» ակումբը և Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հարձակումների ենթարկվեցին 2012 թվականի ապրիլին ադրբեջանական ֆիլմերի ցուցադրման համար տարածք տրամադրելու պատճառով:

Առաջարկություններ

- Կրճատել հավաքի մասին 7 օր առաջ ծանուցելու պահանջը՝ ողջամիտ ժամկետ սահմանելով միջոցառման մասին ծանուցման համար:
- Դադարեցնել «չթույլատրված» միջոցառման պատրվակով խաղաղ հավաքների նկատմամբ ոստիկանության միջամտությունները և խոչընդոտումը:
- Իրականացնել խաղաղ հավաքների սահմանափակման և դրանց ընթացքում ոստիկանության կողմից ուժի գործադրման դեպքերի անկողմնակալ և թափանցիկ քննություն, գտնել և քրեական հետապնդման ենթարկել ավելորդ ուժ գործադրած ոստիկաններին, արդյունավետ իրավական պաշտպանություն ապահովել տուժողներին:

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

«Կրոնական կազմակերպությունների մասին» գործող օրենքը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը, մարդու իրավունքների ոլորտում ստանձնած միջազգային հանձնառություններին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպին: Արդարադատության նախարարությունը նոր օրենքի տեքստ է մշակում, սակայն նախագիծը դեռևս չի տրամադրվել հանրությանը: Թե՛ քաղաքացիական հասարակությունը, թե՛ Վենետիկյան հանձնաժողովը բացասաբար են գնահատել կառավարության կողմից նախկինում պատրաստված երկու նախագծերը:²⁷

Մտքի, խոսքի և կրոնի ազատության սահմանափակումները

Դպրոցում պարտադիր՝ «Հայոց եկեղեցու պատմություն» և «Քրիստոնեական կրթություն» առարկաների միջոցով խախտվում է կրոնի աշխարհիկ բնույթը,²⁸ քանի որ նշված առարկաները միտված են աշակերտներին ուսուցանել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանաբանությունը: Եկեղեցին իր հովանու ներքո գործող Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի միջոցով ունի վերոհիշյալ առարկաների ուսուցանական ծրագրերի մշակման և դասավանդման բացառիկ իրավասությունը, որը հակասահմանադրական է և արգելված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 2-րդ հոդվածով: Կրոնական դասերը հաճախելը պարտադիր է, որը նույնպես Կոնվենցիայի խախտում է:

Հրապարակված մի քանի հետազոտություններ²⁹ և հաշվետվություններ վկայում են այն մասին, որ դպրոցները և մանկապարտեզները հաճախ օգտագործվում են կրոնական պրոպագանդայի և ծիսակատարությունների համար: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասագիրքը դասավանդում է աստվածաբանություն, այլ ոչ՝ պատմություն, իսկ բողոքական կառույցները որակվում են որպես «վտանգ հայ ազգի համար»: Ավելին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետևորդ չհանդիսացող ուսուցիչները

²⁷ Առկա նախագծի հիմնական խնդիրներն են. ցանկացած քարոզ կարող է հանգիստ որակվել որպես «հոգեորսություն», որը քրեականացված է: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն հատուկ կարգավիճակ է վերապահվում: Կրոնական կազմակերպությունների գրանցման պահանջները բարձր են, ընթացակարգը՝ բարդ: Չկան յուրաքանչյուր անձի անկախ քաղաքացիությունից, կրոնի կամ հավատի իրավունքը երաշխավորող դրույթներ, և այլն:

²⁸ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4(3) հոդվածով նախատեսվում են կրթության աշխարհիկ բնույթի երաշխիքները:

²⁹ «Հայոց եկեղեցու պատմության դպրոցական դասագրքերի բովանդակային վերլուծությունն ու դրանց ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա», Հ. Հովհաննիսյան, Ա. Դավթյան, Ս. Մկրտչյան, 2013 թ.:

«Կրոնական կրթության խնդիրները Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում», հունիս, 2012 թ., Ստեփան Դանիելյան, Արա Դազարյան, Հովհաննես Հովհաննիսյան, Արթուր Ավթանդիլյան:

«Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում», Ստեփան Դանիելյան, Վլադիմիր Վարդանյան և Արթուր Ավթանդիլյան,

ISBN 978-92-9235-846-4, 2009 թ.:

կամայականորեն հեռացվել են աշխատանքից, իբրև՝ կրոնական պրոպագանդա իրականացնելու համար: Նոր հաստատված «Պայքար փողոցային արատավոր բարքերի դեմ» նոր ծրագրի համաձայն, ՀՀ Պաշտպանության նախարարությունը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դպրոցներում և զորամասերում իրականացնելու են «կրոնական քայքայիչ շարժումների բացահայտ անդամների և ենթամշակութային ներկայացուցիչների հետ անհատական աշխատանքներ»:³⁰

Հեռուստատեսությունում և զանգվածային լրատվամիջոցներում լայն տարածում ունի ատելություն սերմանող խոսքը: Հեռուստաալիքների մեծամասնությունը դիտավորյալ մոնտաժում են այլ կրոնների ներկայացուցիչների արած մեկնաբանությունները և նրանց ներկայացնում են բացասական նրբերանգով: Եղել են դեպքեր, երբ պետական պաշտոնյաները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց զատ այլ կրոնական ուղղությունները հեղինակազրկող հայտարարություններ են արել, սակայն դա մնացել է անհետևանք:

Առաջարկություններ

- Լուծել «կրոնական կազմակերպություններ մասին» գործող օրենքում առկա խնդիրները, մասնավորապես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերակա դիրքի խնդիրը, կրոնական կազմակերպությունների գրանցման համար սահմանված բարձր պահանջները և քարոզի որպես «հոգեորոշության» որակումը և քրեականացումը, ինչպես նաև հանրային լայն քննարկումների առարկա դարձնել նոր օրենքի նախագիծը:
- Հանրային դպրոցներում և մանկապարտեզներում բացառել քարոզը ուսուցիչների և/կամ որևէ կրոնի կամ եկեղեցու ներկայացուցիչների կողմից:
- Քայլեր ձեռնարկել այլ կրոնների և հավատների դեմ ուղղված պրոպագանդայի և ատելություն սերմանող խոսքի դեմ, և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

³⁰ Ապրիլի 26-ին ՀՀ պաշտպանության նախարարության վարչական համալիրի նիստերի դահլիճում տեղի է ունեցել Գիտագործնական կոնֆերանս՝ «Քայքայիչ պաշտամունքները և փողոցային արատավոր բարքերը որպես պաշտպանունակության սպառնալիք» թեմայով: Կոնֆերանսի ժամանակ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանը հայտարարել է. «Ուղղակի պարտավոր ենք պատկերացնել քայքայիչ պաշտամունքների եւ ենթամշակույթների տարածման ընդգրկումն ու հատկապես հետեւանքները դրանց հետեւորդների եւ մյուս զինվորների համար ... պետք է ապրել ոչ թե պաշտամունքների ու գողական բարքերի թելադրանքով, այլ պետք է հավատք դարձնել հայրենիքը, Հայ Առաքելական Եկեղեցին...»:

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Լրատվամիջոցների մասին օրենսդրությունը հիմնականում համահունչ է միջազգային չափանիշներին, բացառությամբ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի: Հեռարձակման մասին գործող օրենքը, որը վերջին անգամ փոփոխությունների է ենթարկվել 2010 թվականին, մինչ օրս բազմաթիվ հիմնավոր մտահոգությունների տեղիք է տալիս. այն խոչընդոտում է հեռարձակման ոլորտի ազատականացմանը, մրցակցության զարգացմանը, ինչպես նաև հեռուստատեսային ծրագրերի բազմազանությանը: Հեռարձակման մասին օրենսդրությունը չի երաշխավորում ազգային կարգավորող մարմնի անկախությունը: Ավելին, հեռարձակման մասին օրենսդրության բարելավմանն ուղղված օրենսդրական գործընթացները չորս տարի է, ինչ կասեցված են:

Չանգվածային լրատվամիջոցների սեփականությունը թափանցիկ չէ: Չկա զանգվածային լրատվամիջոցների սեփականատերերի մասին տեղեկությունների բացահայտումը պահանջող օրենք: Հեռուստատեսային ընկերությունների հիմնական բաժնետերերը կա՛մ քաղաքական վերնախավի, կա՛մ խոշոր բիզնեսի ներկայացուցիչներ են, որը հանգեցնում է հեռարձակվող լրատվամիջոցների լիարժեք վերահսկելիությանը:

2014 թվականին Ազգային ժողովը սոցիալական ցանցերում կեղծանունների («ֆեյքերի») օգտագործմանն անդրադարձող օրենքի նախագիծ առաջարկեց: Նախագծով փորձ է արվում իրավական պատժիչ մեխանիզմներ ամրագրել սոցիալական ցանցերում տեղ գտած և զրպարտություն պարունակող նյութերի համար: Փորձագետներն արդեն իսկ ընդգծել են նախագծի հետ կապված մի շարք ռիսկերը, մասնավորապես՝ զրպարտությունից պաշտպանության համար արդեն իսկ գոյություն ունեցող իրավական մեխանիզմի առկայությունը և հասկացությունների հնարավոր շփոթությունը, որի նպատակը ոլորտն էլ ավելի վերահսկելի դարձնելն է և արտահայտվելու ազատության չհավասարակշռված պաշտպանությունը հնարավոր դարձնելը:

Կարծիքի ազատության իրավունքը

Հեռարձակման մասին օրենսդրության փոփոխությունները համահունչ չեն երկրի միջազգային հանձնառություններին, որոնք նպատակաուղղված են հեռարձակվող լրատվամիջոցների բազմազանության ապահովմանը և թվայնացման պատշաճ իրագործմանը:

Թվայնացման գործընթացը թափանցիկ չէ և պարունակում է կոռուպցիայի ռիսկեր: 2010 թվականի դեկտեմբերին շնորհված թվայնացման արտոնագրերը, գործող օրենսդրության համաձայն, վավեր են 10 տարի ժամկետով:

տով: Այդ արտոնագրերը շնորհվել են պրոբլեմատիկ կարգավորող մարմնի անցկացրած մրցույթով, թափանցիկության խստառ բացակայության պայմաններում, չունենալով արտոնագրման հստակ չափորոշիչներ կամ արդար մրցակցության երաշխիքներ:

Թեպետ օրենսդրությամբ Հայաստանում արգելվում է գրաքննությունը, հեռարձակման ոլորտում համակարգային տարածում ունի քողարկված գրաքննությունը: Լրագրողների և լրատվամիջոցների իրավունքների խախտումներն ավելանում են հատկապես ընտրական և հետընտրական ժամանակաշրջաններում: Լրագրողների նկատմամբ հարձակումների դեպքերի արդյունավետ և վստահելի քննություն չի իրականացվել:³¹ Հետևյալ աղյուսակում ներկայացված են լրագրողների և լրատվամիջոցների իրավունքների խախտումները Հայաստանում 2010-2013 թվականներին:³²

| Խախտումների տեսակները | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|--|------|------|------|------|
| Ֆիզիկական բռնություն լրագրողների նկատմամբ | 9 | 5 | 4 | 10 |
| Ճնշումներ զանգվածային լրատվամիջոցների և նրանց աշխատողների նկատմամբ | 19 | 49 | 37 | 57 |
| Տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումներ | 18 | 7 | 23 | 10 |

2010 թվականի մայիսի 18-ին ՀՀ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում ապաքրեականացվեցին զրպարտությունը և վիրավորանքը, և օրենսդրությամբ նախատեսվեցին բարոյական վնասի հատուցման տուգանքի չափերը (վիրավորանքի համար՝ մինչև 1 միլիոն դրամ (1,800 եվրո), զրպարտության համար՝ մինչև 2 միլիոն դրամ (3,600 եվրո)): Ջրպարտության և վիրավորանքի՝ լրագրողների և լրատվամիջոցների դեմ ներկայացված դատական հայցերի թիվը 2012 թվականին նվազեց՝ հասնելով 18-ի, 2011 թվականի 37 հայցի փոխարեն: Այնուհանդերձ, թիվը կրկին աճեց 2013 թվականին՝ հասնելով 26-ի:³³ Ջրպարտության և վիրավորանքի համար օրենքով նախատեսված հատուցման գումարը չափազանց մեծ է, և շատերն այն օգտագործում են որպես ճնշումների գործիք զանգվածային լրատվամիջոցների դեմ:

³¹ 2013 թվականի տարեկան զեկույցը Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե: Աղբյուրը՝ <http://khosq.am/en/reports/annual-report-2013/>

³² 2010, 2011, 2012 և 2013 թվականների տարեկան զեկույցները Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե: Աղբյուրը՝ <http://khosq.am/en/reports/>

³³ ՋԼՄ-ների ներգրավվածությամբ զրպարտության եվ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիտորինգ, 2013 թ., Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե:

Աղբյուրը՝ <http://khosq.am/en/monitorings/monitoring-of-libel-and-insult-cases-against-the-media/>

Առաջարկություններ

- «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ապահովելով զանգվածային լրատվամիջոցների սեփականության մասին տեղեկությունների թափանցիկությունը, անցում կատարելով պարզեցված արտոնագրման ընթացակարգին և ապահովելով մրցույթների արդարացիությունը և ազգային կարգավորող մարմնի անկախությունը՝ բարեփոխելով վերջինիս անդամների ընտրության և նշանակման կարգը:
- Ապահովել թվայնացման գործընթացի թափանցիկությունը՝ հանրությանը տեղեկացնելով ամենակարևոր տեխնիկական, ֆինանսական և սոցիալական խնդիրների և դրանց լուծումների մասին:
- Բարեփոխել քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը՝ նպատակ ունենալով կանխել դրա՝ որպես ճնշումների գործիքի հնարավոր օգտագործումն ընդդեմ զանգվածային լրատվամիջոցների, մասնավորապես՝ զգալիորեն նվազեցնելով գրպարտության և վիրավորանքի համար նախատեսված հատուցման գումարի առավելագույն թույլատրելի չափը:
- Իրականացնել լրագրողների նկատմամբ հարձակումների լիարժեք և անկողմնակալ քննություն՝ հրապարակելով զեկույց յուրաքանչյուր քննության արդյունքների մասին:

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Հայաստանը վավերացրել է այս ոլորտում ընդունված միջազգային իրավական փաստաթղթերի մեծամասնությունը, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 12-րդ արձանագրությունը, սակայն խտրականության արգելքի մասին իրավական դրույթները ցաքուցրիվ կերպով ամրագրված են օրենսդրական տարբեր ակտերում, և ստեղծված չէ պաշտպանության համապարփակ շրջանակ: Միևնույն ժամանակ, լայն տարածում ունեն հասարակական և ինստիտուցիոնալ խտրականությունը, անհանդուրժողականությունը և ոտնձգությունները, և որոշակի խմբերի գոհայնացումը և խարանումը: Իշխանությունները սեփական նախաձեռնությամբ լուրջ միջոցներ չեն ձեռնարկում խտրականության դեմ պայքարի ուղղությամբ: Խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենսդրություն ունենալու հարցը քննարկվում էր ԵՄ-Հայաստան ասոցացման համաձայնագրի բանակցությունների շրջանակում, սակայն օրակարգից հանվեց այն բանից հետո, երբ նախագահը հայտարարեց, որ Հայաստանն անդամակցելու է Ռուսաստանի կողմից առաջնորդվող Մաքսային միությանը: Առանձին օրենքի ընդունումը վիթխարի նշանակություն ունի, քանզի այն ամբողջական երաշխիքներ կապահովի՝ տարբեր ոլորտներում արգելելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով դրսևորվող խտրականությունը:³⁴

Խտրականությունը պրակտիկայում

Մարզինալացված փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավապաշտպանները,³⁵ ակտիվիստները և լրագրողները ոտնձգությունների և հարձակումների են ենթարկվում՝ պիտակվելով որպես «դավաճաններ»: Արժեքների համաշխարհային հետազոտությամբ («World Value Survey»)³⁶ պարզվել է, որ Հայաստանում այլ մարդկանց նկատմամբ հանդուրժողականության և հարգանքի մակարդակը 56.3% է: Հետազոտությամբ պարզվել է, որ անհանդուրժողականության մակարդակն ամենաբարձրն է նույնասեռականների նկատմամբ (հարցվածների 92.7%-ը չէին ցանկանա, որ նրանք իրենց հարևանները լինեին), ՉԻԱՀ ունեցողների նկատմամբ (76.9%), այլ կրոնի ներկայացուցիչների նկատմամբ (56.6%) և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ (37.0%):

Մեկ այլ հետազոտությամբ պարզվել է, որ 1,189 հարցվածների 71.5%-ը համարում է, որ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի նույնասեռականներ-

³⁴ ԵՄ-Հայաստան ասոցացման համաձայնագրի բանակցությունները: Աղբյուրը <http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P7-TA-2012-0128+0+DOC+XML+V0//EN>
³⁵ Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում, 2013 թ.: Աղբյուրը՝ <http://hcav.am/en/publications/situation-of-human-rights-defenders-in-armenia/>
³⁶ World Value Survey Database 2010-2014, Retrieved from <http://www.worldvaluessurvey.org/WVSONline.jsp>

րի դեմ «պայքարի» ուղղությամբ:³⁷ Նույնասեռականության հասարակական ընկալումների վերաբերյալ վերջին հետազոտություններից մեկի տվյալներով,³⁸ առողջապահական ոլորտի մասնագետների, իրավաբանների և մանկավարժների մեծամասնությունը (համապատասխանաբար 53, 48 և 38 տոկոսը³⁹) նույնասեռականությունը համարում է հիվանդություն: Իշխանությունները չեն իրականացնում LQAPS հանձանց մասնակցությամբ արձանագրվող դեպքերի վստահելի քննություն: այս դիրքորոշումը հատկապես ակնհայտ դարձավ 2012 թվականին, երբ ռումբ պայթեցվեց նույնասեռականների նկատմամբ բարյացկամ տրամադրված (անգլ.՝ «gay-friendly») սրճարանում:⁴⁰ Ռումբի պայթեցման մեղավորները սկզբում ձերբակալվեցին, սակայն ավելի ուշ ազատ արձակվեցին, և քաղաքական վերնախավի տարբեր խմբավորումների ազդեցության ներքո նրանց վրայից հանվեց մեղադրանքը: ՄԻԱՎ-ով ապրող անձինք, թմրադեղեր օգտագործողները և սեռական աշխատանք կատարողները խտրականության են ենթարկվում առողջապահական ծառայությունների մատուցման և իրավական պաշտպանության ոլորտներում, քանի որ առկա են սխալական պատկերացումներ և ոչ բավարար իրազեկություն հիվանդության փոխանցման անհնարիության մասին:

Թեպետ օրենսդրությամբ նախատեսվում են տղամարդկանց և կանանց հավասար իրավունքները, գենդերային խտրականությունն առկա է կյանքի բոլոր ոլորտներում: Կանայք հաճախ շարունակում են ոչ բավարար չափով ներկայացված ինել դեկավար պաշտոններում: Մասնագիտական կյանքում կանայք հաճախ չեն ստանում նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ: Հրատապ խնդիրներից են պտղի սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումները⁴¹ և խտրականությունը սեռական բռնության և կենցաղային բռնության զոհերի նկատմամբ:

Մասնագիտական որոշ ոլորտներում արձանագրվում են կրոնական համոզմունքներով պայմանավորված՝ աշխատանքից հեռացման, աշխատանքի չընդունելու, զբաղվածության արգելքներ կիրառելու և այլ խոչընդոտներ առաջացնելու դեպքեր: Դպրոցներում լայն տարածում են գտել այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են այլ կրոնի հետևորդ աշակերտների նկատմամբ

³⁷ LQAPS հանձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում: «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն» և «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, 2011 թ.:

Աղբյուրը՝ <http://www.pinkarmenia.org/publication/lgbtsurveyen.pdf>

³⁸ Armenian Helping Professionals About Homosexuality and LGBT Community, Yegea Publications, Lusine Karameyan, 2013.

³⁹ Օգտագործվել է հետազոտության որակական և քանակական մեթոդների համադրությունը: Հետազոտությունն իրականացվել է բազմափուլ կլաստերային ընտրանքի մեթոդով: Ընդհանուր ընտրանքը ներառել է 500 հարցվողներ, որոնցից 255-ը՝ Երևանում, իսկ 245-ը՝ մարզերում: Հարցվողների 37%-ը ներկայացրել է առողջապահության ոլորտը, 25%-ը եղել են իրավաբաններ, 20%-ը և 18%-ը համատասխանաբար մանկավարժներ և հոգեբաններ:

⁴⁰ Առավուտ, առցանց: Աղբյուրը՝ <http://www.aravot.am/2012/05/17/297457/>

⁴¹ 1990-ականներից սկսած Հայաստանում պտղի սեռով պայմանավորված արթոտներ կատարելու պատճառով արական և իգական սեռի նորածինների թվաքանակների հարաբերակցությունը 2012 թվականին կազմել է 1.14, մինչդեռ ստանդարտ ցուցանիշը տատանվում է 1.02-ից 1.06-ի միջակայքում (արական և իգական սեռի նորածինների թվաքանակների հարաբերակցությունը): 2060 թվականին լույս աշխարհ չեն գա մոտ 2,000 իգական սեռի նորածիններ: Մանրակրկիտ տեղեկությունների համար տե՛ս [http://www.unfpa.am/sites/default/files/Sex-selective abortions report Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/Sex-selective%20abortions%20report%20Arm.pdf)

վատ վերաբերմունքը, տարբերակումը և կրոնական համոզմունքների մասին հարցապնդումները:

Կրթության, աշխատանքի⁴² և ժամանցի հնարավորությունները հոգեւոցիալական, մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար նախկինի պես սահմանափակ են: Պետությունը շարունակում է ձախողել հավասար հնարավորությունների, ողջամիտ հարմարությունների և համընդհանուր նախագծման սկզբունքների կատարումը: Խախտումների կապակցությամբ խախտված իրավունքի վերականգնման և պատասխանատվության մեխանիզմներ չեն գործարկվում:

Առաջարկություններ

- Ընդունել խտրականության դեմ պայքարի առանձին օրենսդրություն և արդյունավետ մեխանիզմ:
- Ընդունել կենցաղային բռնության մասին առանձին օրենք և ստեղծել կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման համակարգ:
- Վավերացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը:
- Ստեղծել ատելություն սերմանող խոսքը քրեականացնող և պետական պաշտոնյաների կողմից հոմոֆոբ հայտարարությունները բացառող համապարփակ համակարգ:
- Փոքրամասնությունների և խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների վերաբերյալ ուսուցումներ կազմակերպել ոստիկանների, բժիշկների և այլ մասնագետների համար:

⁴² Աշխատանքային տարիքի, հաշմանդամություն ունեցող անձանց 91%-ը գործազուրկ է: Աղբյուրը՝ <http://disabilityarmenia.am/am/10/free.html>

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Ինչպես և նախկինում, պետական կառավարման համակարգի առավել խնդրահարույց ինստիտուտներից են ընտրությունները: Ընտրելու և ընտրվելու իրավունքն ինքնին առավել հաճախ խախտվող իրավունքներից է: Վիճարկելով 2008 թվականի նախագահական ընտրությունների արդյունքները, ընդդիմությունը կազմակերպել էր նստացույց, որը բռնի կերպով ցրվեց իշխանությունների կողմից, որի հետևանքով մահացավ 10 մարդ: Այդ իրադարձությունների քննությունը բավարար չափով վստահելի չէր, որևէ կերպ չնպաստեց ընտրությունների նկատմամբ հանրության վստահության վերականգնմանը, փոխարենը՝ ծառայեց միայն անպատժելիության արդեն իսկ գոյություն ունեցող մթնոլորտի ամրապնդմանը: Չենքնօգտագործած կամ հրամաններ տված անձանցից ոչ մեկը մինչ օրս չի հայտնաբերվել և չի պատժվել:

Այդ ժամանակից ի վեր Հայաստանում ևս մեկ անգամ անցկացվել են նախագահական, խորհրդարանական և տեղական ընտրություններ, որոնք բոլորը նպաստել են քաղաքացիական հասարակության կողմից վերջին 15 տարիներին դիտարկված և արձանագրված կոռուպացված գործելաոճի այնպիսի դրսևորումների ամրապնդմանը, ինչպիսիք են ընտրակաշառքը, ընտրողների, դիտորդների և վստահված անձանց նկատմամբ ճնշումները և ահաբեկումը, բազմակի և «կարուսելային» քվեարկությունը, ընտրատեղամասերում հանցագործների կողմից իրականացվող վերահսկողությունը և քվեատուփերի լցումը:

Տեսականորեն հարկ է հիշատակել, որ 2011 թվականին ընդունված ընտրական օրենսգիրքը պարունակում է ազատ, արդար և լիովին ժողովրդավար ընտրությունների երաշխավորման նվազագույն հիմքերը, սակայն դրա կատարման հարցում քաղաքական կամքի պակասը հանգեցնում է առկա սղանցքների խորամանկ օգտագործմամբ ընտրակեղծիքի քողարկմանը:

Թեպետ 2012 և 2013 թվականների ընտրությունները միջազգային հանրության կողմից որակվեցին որպես «քայլ դեպի առաջ», մարդու իրավունքների և ժողովրդավարության կայացման խնդիրներով զբաղվող՝ քաղաքացիական հասարակության բազմաթիվ տեղական կառույցներ նշեցին, որ խախտումների բնույթը ժամանակի ընթացքում փոխվել է՝ բռնի և բացահայտ ահաբեկումից և ոտնձգություններից անցում կատարելով բազմակի քվեարկության և ընտրակաշառքի՝ ավելի խաղաղ մեթոդներին: Նախագահական ընտրություններում անբացատրելիորեն իր թեկնածությունը չառաջադրեց հիմնական ընդդիմադիր թեկնածուն: Ընդդիմադիր երկու այլ թեկնածուներ չառաջադրվեցին՝ դա պայմանավորելով ենթադրյալ ճնշումներով կամ ահաբեկումներով: Չնայած կեղծիքի և կեղծարարության մասին տարբեր անհատներից, կազմակերպություններից և զանգվածային լրատվամիջոցներից ստացված բազմաթիվ տեղեկություններին, իրավապահ մարմինները համարժեքորեն չեն քննում այդ տեղեկությունները և չեն հարուցում

քրեական գործեր: Նույնիսկ այն դեպքում, երբ նշված մարմինները հետամուտ են լինում գործին, ակնհայտ է դառնում ահաբեկման մարտավարության կիրառությունը «աղմուկ բարձրացնողների» նկատմամբ, փոխարենը՝ օժանդակելով անօրինական գործունեությամբ զբաղվող անձանց:⁴³ Ելնելով բացասական հետևանքների մասին մտավախություններից, հանրությունն ընդհանուր առմամբ հակված չէ հաղորդումներ ներկայացնելու ընտրախախտումների վերաբերյալ:⁴⁴

Ընտրողների գրանցումը և ընտրացուցակները

Ընտրական օրենսգրքի 7-րդ հոդվածը կարգավորում է ընտրացուցակները, որոնցում ինքնաբերաբար ներառվում է ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, ում անունը ներառված է Բնակչության պետական ռեգիստրում: Շատերը համարում են, որ ընտրացուցակը չափազանց ուռճացված է՝ պայմանավորված արտագաղթի բարձր ցուցանիշով, և որ քվեարկության օրվա ընթացքում ընտրացուցակը ծառայեցվում է ընտրությունները կեղծելու նպատակին: Չնայած ցուցակի վարման տեխնիկական գործընթացը բարելավելու ջանքերին, ընտրողների շրջանում դեռևս համընդհանուր անվստահություն կա ցուցակի անաչառության նկատմամբ: Ընտրացուցակների շահարկումն ակնհայտ էր 2013 թվականի նախագահական ընտրություններում՝ պայմանավորված բազմաթիվ անկախ փորձագետների և դիտարկող կազմակերպությունների արձանագրած տարօրինակ օրինաչափություններով, որոնց համաձայն Սերժ Սարգսյանի առավելությունն ակնհայտ էր այն տեղամասերում, որտեղ անհավանականորեն բարձր էր եղել ընտրություններին ընտրողների մասնակցության ցուցանիշը:⁴⁵ Դավկայում է քվեաթերթիկների զանգվածային լցումն և ընտրություններին ընտրողների մասնակցության ցուցանիշի ուռճացման մասին, որոնք հնարավոր չէրավ փաստերով ապացուցել, քանի որ ընտրական օրենսգրքի նորմերով արգելվում է ընտրությունից հետո ստորագրված ընտրացուցակների հրապարակումը: Ընտրական գործընթացի անաչառությունը հարցականի տակ առնվեց նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրությունների դիտորդական առաքելության կողմից:⁴⁶ Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակությունը չունի վերոհիշյալ մտահոգությունը դիտարկելու և փարատելու արդյունավետ միջոցներ: Քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպություն-

⁴³ Հետընտրական միջանկյալ զեկույց, 19-26-ը փետրվարի, 2013 թ., ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Մարդու իրավունքների ընտրադիտարկման առաքելություն, 2013 թ. մարտ: Աղբյուրը՝ <http://www.osce.org/odihr/elections/99931>

⁴⁴ ՀՀ նախագահական ընտրությունը, 18-ը փետրվարի, 2013 թ., ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտարկման առաքելություն: Վերջնական զեկույց, ԵԱՀԿ, 2013 թ. մայիս: Աղբյուրը՝ <http://www.osce.org/odihr/elections/101314>

⁴⁵ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլանֆորմի զեկույցը Հայաստանի 2013 թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ: Աղբյուրը՝ <http://www.eap-csf.eu/assets/files/Documents/ANP%20report%20on%20elections%202013.pdf>

⁴⁶ Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունը, 18-ը փետրվարի, 2013 թ., ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտարկման առաքելություն: Վերջնական զեկույց: Աղբյուրը՝ <http://www.osce.org/odihr/elections/101314?download=true>

ների հաշվարկներով, ընտրացուցակում ներառված են մոտ 500,000 անձինք, ովքեր ներկայումս բնակվում են Հայաստանից դուրս:

Վարչական ռեսուրսի օգտագործումը

Թե՛ նախընտրական քարոզչության, թե՛ քվեարկության օրվա ընթացքում վարչական ռեսուրսները լայնորեն չարաշահվում են դրանք վերահսկող իշխանությունների, հիմնականում՝ իշխող կուսակցության կողմից, հազվադեպ դեպքերում նաև քաղաքական այլ խմբակցությունների կողմից:⁴⁷ Վարչական ռեսուրսների չարաշահման ակնհայտ վկայությունն է օրենսդրության ընտրողական և հայեցողական կիրառությունը, իսկ մասամբ նաև վարչական մարմինների գործելակերպը:⁴⁸ Ընտրությունների տեղացի դիտորդները բացահայտել են, որ նախընտրական քարոզչության և քվեարկության օրվա ընթացքում իշխող կուսակցությունը վարչական ռեսուրսներն օգտագործել է քվեներ շահելու նպատակով, մինչդեռ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների և այլ վարչական մարմինների ռեսուրսները ծառայեցվել են այդ չարաշահումը քողարկելու նպատակին:⁴⁹

Առաջարկություններ

- Փոփոխություններ կատարել ընտրական օրենսդրության մեջ՝ երաշխավորելով ընտրությունից հետո ընտրացուցակների հրապարակումը, որպեսզի սահմանափակվեն բազմակի քվեարկության և քվեատուփերի լցումն ան երևույթները, և որպեսզի ապահովվի քաղաքացիական հասարակության վերահսկողությունը գործընթացի նկատմամբ:
- Ապահովել ընտրությունների պատշաճ և թափանցիկ անցկացումը՝ տեսագրելով և ուղիղ եթերով հեռարձակելով քվեարկության գործընթացը երկրի տարածքում գտնվող բոլոր ընտրական տեղամասերում և դրանցից դուրս:
- Երաշխավորել ընտրախախտումների քննությունը և դատապարտումը՝ բարելավելով ընտրական հանձնաժողովներին, դատական և իրավապահ մարմիններին ներկայացվող բողոքների քննության ընթացակարգերը, և ընտրողներին և դիտորդական կազմակերպություններին վերապահելով ընտրական գործընթացի օրինականությունը վիճարկելու իրավունքը:
- Կանխել վարչական ռեսուրսների չարաշահումը՝ խստացնելով նախընտրական քարոզչության և քվեարկության գործընթացներում պետական պաշտոնյաների նկատմամբ գործող սահմանափակումները, վերացնե-

⁴⁷ Համատեղ վերջնական եզրակացությունը Հայաստանի ընտրական օրենսգրքի վերաբերյալ, 2011 թ. մայիս: Աղբյուրը՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2011\)032-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2011)032-e)

⁴⁸ Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունը, 18-ը փետրվարի, 2013 թ., ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտարկման առաքելություն: Վերջնական զեկույց, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, 2013 թ. մայիս: Աղբյուրը՝ <http://www.osce.org/odihr/elections/101314>

⁴⁹ 2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները դիտարկող առաքելության զեկույցը, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2012 թ.: Աղբյուրը՝ <http://hcav.am/wp-content/uploads/2012/08/Elections-report-final-May-2012-Eng1.pdf>

լով դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների և առաքելությունների համար նախատեսված էլեկտրոնային քվեարկության մեխանիզմները, պատասխանատվության մեխանիզմները և վարչական ռեսուրսների չարաշահման և ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական օրենսգրքի խախտումների դեպքերի համար:

- Տեսագրման և առցանց հեռարձակման միջոցով ապահովել ընտրական գործընթացի թափանցիկությունը: